ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գործուղման արդյունքների

վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Գայանե Ղարագյոզյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ղազախստան, Աստանա, 2026 թվականի հուլիսի 7-ից 9-ը

3. **Հրավիրող կողմը.**

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

4. **Գործուղման նպատակը.**

2026 թվականի հուլիսի 7-ից 9-ը մասնակցություն Աստանայում կազմակերպված «Ծրագրերի արդյունավետ նախագծում և իրականացում» խորագրով տարածաշրջանային համաժողովին, որի նպատակն էր աջակցել ԱԶԲ ռազմավարական առաջնահերթություններին՝ ամրապնդելով տարածաշրջանային համագործակցությունը միջտարածաշրջանային փորձագիտության, կատարող և իրականացնող գործակալությունների միջև երկխոսության, գործնական փորձի և նորարարական լուծումների փոխանակման միջոցով, ինչպես նաև միավորել զարգացող անդամ երկրների քաղաքականության մշակողներին, մասնագետներին և նախագծերի իրականացնողներին՝ գործնական քննարկումների, վերապատրաստման և գիտելիքների փոխանակման համար, որոնք ուղղված են նախագծերի կառավարման և իրականացման արդյունքների բարելավմանը:

5. **Քննարկված թեմաները.**

Համաժողովի ընթացքում քննարկված բոլոր թեմաների առանցքում ռիսկերի կառավարումն էր նախագծերի իրականացման բոլոր փուլերում: Մասնավորապես անդրադարձ եղավ հետևյալ հարցադրումներին՝

Ինչո՞ւ է ռիսկերի կառավարումը կարևոր զարգացման նախագծերում,

Ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ, եթե ռիսկերը լավ չեն կառավարվում,

Ի՞նչն է աշխատում և ի՞նչն է բացակայում մեր ներկայիս ռիսկերի կառավարման պրակտիկայում՝ նախագծի հաջող իրականացումն ապահովելու համար:

Միաժամանակ տարբեր երկրների (Կորեա, Ղազախստան, Վրաստան, Մոնղոլիա, Ուզբեկստան և այլն) ներկայացուցիչներ ներկայացրեցին իրենց երկրներում տվյալ բնագավառում առկա մարտահրավերներն ու ռիսկերի կառավարման նպատակով կիրառվող մոդելները:

Վերոնշյալ թեմաների քննարկումն ապահովեց՝

- Նախագծերի ռիսկերի կառավարման ոլորտում ամենատարածված և տարբեր երկրների համար ընդհանրական թերությունների և լավագույն փորձի ուսումնասիրում:
- Նախագծերի իրականացման ողջ ընթացքում ռիսկերի կառավարման գործողությունների պլանի մոնիթորինգի և թարմացումների կարևորության վերաբերյալ ավելի լայն իրազեկվածություն:
- ԱԶԲ-ի և կատարող ու իրականացնող գործակալությունների դերերի և պարտականությունների համատեղ գնահատում նախագծի իրականացման ընդհանուր համատեքստում:
- Տարածաշրջանի/երկրի/ոլորտի/նախագծի հետ կապված փորձի և ԱԶԲ նախագծային ցիկլի շուրջ հաջողված միջոցառումներից քաղված փորձի ու դասերի փոխանակում:
- Յուրաքանչյուր մասնակից երկրի համար համառոտ գործողությունների ծրագիր, որն ուրվագծում է նախագծի մակարդակի ռիսկերի կառավարումը և մոնիթորինգը ամրապնդելու կոնկրետ քայլեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովի 3-րդ օրը բոլոր երկրների ներկայացուցիչներին հանձնարարվեց առավելագույնը 3 կետով նշել համաժողովից քաղած հիմնական դասերը և այն առանցքային կետերը, որոնք ըստ մասնակիցների առավել արդիական են հենց իրենց երկրների համար: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների կողմից ընդհանուր քննարկման արդյունքում ձևավորվեց համապատասխան տեղեկատվական սահիկաշար, որն ամփոփ կերպով ներկայացրեց ՀՀ քաղաքապետարանի ներկայացուցիչը:

Համաժողովի ընթացքում քննարկված կարևորագույն կետերից էր ԱԶԲ կողմից ռիսկերի ուսումնասիրության հիմնական արդյունքների ներկայացումը, ներառյալ Ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման գործողությունների ծրագրի (RAMP) մշակման և մոնիթորինգի պրակտիկայի բացթողումները, ինչպես նաև ներկայացվեցին գործնական գործիքներ և մոտեցումներ՝ ոլորտների և երկրների համատեքստում ռիսկերի ավելի լավ նույնականացման, գնահատման և պլանավորման համար:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ժամանակ փաստաթղթեր չեն ստորագրվել, որոշումներ չեն ընդունվել, սակայն այն չափազանց կարևոր էր տարածաշրջանի երկրների միջև փորձի փոխանակման, առկա խնդիրների վերհանման և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ այդ բնագավառում ավելի մեծ փորձ ունեցող երկրներից խորհրդատվության ստացման համատեքստում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համաժողովից ստացված գիտելիքներն ու փորձը հնարավորություն կտան դրանք տեղայնացնել Հայաստանի Հանրապետության և ԱՋԲ միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) դրամաշնորհային համաձայնագրի շրջանակում ՀՀ ԱՍՀՆ ստանձնած պարտավորությունների իրականացման գործընթացում առաջիկա 5 տարիների ընթացքում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

15.07.2026թ.